



ԱՐՄԵՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ

ԹՈՒԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

# Dioceſe of the Armenian Church of America

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

\* MURRAY HILL 6-0710

Bishop Torkom Manoogian, Primate

Թիւ 20304  
Փետրուար 29, 1968

Աբժանաշնորհ  
Տ. աճատ քէնյ. Դաւիթեան  
Հոգեւոր Հովի Ս. Սեսրոպ Եկեղեցւոյ  
Եւ Նախագահ Ծխական Խորհուրդի  
Ռէյսին.

Սիրելի Տէր Տաճատ,

Ստացած ենք 1968 Փետրուար 20 թուակիր Ձեր տեղեկադիրը, որով կը  
հաղորդէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Փետրուար 4ին զումարուած Ձեր Ծխա-  
կան Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրու-  
թիւնը, ուստի Ներկայացնելով քու էարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած  
անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ծխական Ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ծխական  
Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք Ծխական Ժողովին Ներկայացուած Ձեր եւ Ծխական Խորհուրդի  
տեղեկադիրները Առաջնորդարան ղրկել փութով:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաշող եւ արդիւնաւոր զործունեութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

Տիաբը՝ Աէմ Կարապետեան  
Փոլ Պուշաքեան  
Ոապլըթ Ագկիւլեան

ԹՈՒԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ